ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ, Ե–ԺԲ ԴԴ.

Ուրախութեամբ ձեռք առինք Արտաշէս Ս. Մաթեւոսեանի նոր երկը՝ Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, Ե–ԺԲ. դարերի, Երեւան, 1988, որ կոչուած է կարեւոր նպաստ մը բերելու հայ բանասիրութեան։

Գիրքը կը բաղկանայ ԽԷ + 366 էջերէ՝ հետեւեալ բովանդակութեամբ. Հայերէն Ձեռագրերի Յիշատակարանները (էջ Ե–ԽԵ), Յիշատակարաններ 1–357 (էջ 1–340), Ցանկ Օգտագործուած Աղբիւրների եւ Գրականութեան (343–347), Անձնանունների Ցանկ (348–360), Տեղանունների Ցանկ (361–364), Առարկայական Ցանկ (365–366)։

Այս յիշատակարաններուն մէկ մասը ժամանակին հրատարակուած էր Յովսէփեան Գարեգին կաթողիկոսի կազմած Յիշատակարանք Ձեռագրաց երկին Առաջին Հատորին մէջ, միւս մասը կը հրատարակուի ներկայիս առաջին անգամ։ Այսկերպով Ե–ԺԲ դարերուն պատկանող յիշատակարանները, որքան որ մատչելի եղած են Հեղինակին, այժմ մէկտեղուած են մէկ հատորի մէջ, դիւրացնելով բանասէրներու աշխատանքը։

Գնահատելի է յարգելի Հեղինակին եռանդն ու նուիրումը գլուխ հանելու այսպիսի երկ մը, որ դիւրութեամբ իրականացուելիք գործ մը չէ անտարակոյս։

Հատորս կարդալու ժամանակ հանդիպեցանք նկատողութեան արժանի զանազան կէտերու, զորս կը ներկայացնենք ստորեւ յօգուտ ընթերցողաց։

1. — էջ 42, տող վարէն 10–9 «Եւ երկիր պագեալ զիշխանն զաջն նորա, համբուրէր և զերեսն փառաւորաց»։ Ուղղելի. «Եւ երկրպագեալ իշխանն զաջն նորա համբուրէր և զերեսան փառաւորաց»։

2. — էջ 62, ծանօթ. 2. — Լուսանցքում այդ բառերի գիմաց գրված է, համանաբար այլ ընդօրինակողի ձեռքով. «Ի ստուգութենէ հեռի էր, թէ ոչ եաք աշխատել մեծապէս»։ Դիտ. Չակերտեալ տողերը գրած է հետագայ ստացող Յովհաննէս Քահանայ = Սարկաւագ Վարդապետ, որ ծայրէ ծայր սրբագրած է սոյն ձեռագիրը։

3. — էջ 63, ծնթ. — Մեր Ցուցակին մէջ յիշատակարանի վերջում տրուած ՆԻՋ տարեթիւը տպագրական վրիպակ է, ուղղելի է ՆՂԶ։ Ուստի այդ յիշատակարանին ճիշդ տեղը պիտի ըլլայ 1047 թուականին տակ։

4. — էջ 65, տող բնագրի, վարէն 5. «անճեչութեան»։ Ուղղելի՝ անճելութեան։

5. — էջ նոյն, վարէն առաջին տող. «որ յարաժամ գեգերիմ յընթեռնուլն իսկ գործ՝ և ոչ փոքր ինչ ժամանակ սահմանեալ որոշեմ»։ Ուղղելի՝ որ յարաժամ գեգերիմ յընթեռնուլն. իսկ գործոց և ոչ փոքր ինչ ժամանակ սահմանեալ որոշեմ։ Տես Ձեռ. Ս. Յ., թիւ 1238, էջ 390, որ ունի տող մը եւս. Աւա՜ղ թէ ընդ վայր լիցի։

6. — էջ 75, տող բնագրի, վարէն 2. «Եղողին ի Հաւրէ և յՈրդւոյ, ոչ բաժանողին»։ Ստորակէտը աւելորդ է և անհարազատ։

7. — էջ 84, թիւ 100. — Երուսաղէմի թիւ 256 ձեռագրի պահպանակին վրայ այդպիսի յիշատակարան չկայ։ Հմմտ. Յիշատակարանք Ձեռագրաց, թիւ 95։

8. — էջ 91, թիւ 110, տող 7. «աղջախոհակ»։ Յիշատակարանքի մէջ «որջախոհակ». արդեօք ո՞րն է ճիշդը։

9. — էջ 93, տող վերէն 8. «Ի ճշգրիտ գաղափարէ յիմաստնոյ Իսիսեէ, առն ճարտարի գրչին»։ Ընդգծեալ բառը կը թուի ըլլալ գրչին անունը՝ ծածկագրեալ։ Եթէ այդպէս է կրնայ վերծանուիլ Անանեէ, և նոյնացուիլ Սանահնեցի Անանիա (Անանէ) Վարդապետին հետ։

10. — էջ 93, տող բնագրի, վարէն 15. «զգաստանանայոյն շնորհն». ձեռագրին մէջ «զգաստնայ...ն»։ Ուղղելի՝ զգաստնայնոյն։

11. — էջ 102, տող վերէն 1. «աղաչանքն»։ Ուղղելի՝ աղալանք։

12. — էջ 104, թիւ Բ, վարէն տող 3. «գծաւղս»։ Ուղղելի՝ գծնաւղս։

digitised by A.R.A.R.@

13. — Էջ 110, տող վերէն 18–23. «զի և ինձ բայց ի ... հրաժարելոց իմոց ի ծփանաց կենցաղոյ, հասի անելի ... ամենեցուն ... աղաւիթեւք»։ Ուղղելի է՝ զի և ինձ բացցի ... հրաժարելոյն իմոյ ի ծփանաց կենցաղոյս. հասի երանելի ... ամենեցունց ... աղաւթիւք։

14. — Էջ 121, տող վերէն 4. «զամենեսանն»։ Ուղղելի՝ զամենեսեան։ Նոյնպէս՝ էջ 166, 195, 213, 239, 252։

15. — Էջ 149, տող վերէն 11. «զոր իմ կիւրակոսի տիպի և անարժանիս»։ Ուղղելի՝ տպի։

16. — Էջ 173, ծանօթ. 1. «Սոյն Ցառաջաբանութիւնը գրված ենք համարում 'ի Զճ և Գ (1154)' թվականից ոչ շատ ուշ և դնում ենք այդ թվաշարքում»։ Այդ թուականը շատ կանուխ կը թուի, նկատի առնելով որ խնդրոյ առարկայ «Ցառաջաբանութիւնը» գրուած է Ներսէս Շնորհալիի կենաց աւարտէն, այսինքն 1173 թուականէն ետք։

17. — Էջ 195, տող վարէն 10. «երբեք»։ Ուղղելի՝ իբրև։

18. — Էջ 197, տող վերէն 10. «և որդւովքն Զորդուանելին, հասանէր նոցա»։ Ուղղելի՝ «և որդւովքն Զարդուանելին. ապա յանկարծակի յետ ամի միոյ անցելոյ, զկնի մահուանն Զարդուանելին, հասանէր նոցա»։

19. — Էջ 223, տող վարէն 15. «ոչ ոք ձեռն հասիցէ»։ Ուղղելի՝ ոչ ոք ձեռնհաս իցէ։

20. — Էջ 241, տող վերէն 15. «ըստեղծմամբն»։ Ուղղելի՝ ստածմամբն։

21. — Էջ 244, տող վերէն 7. «ուրբինակն»։ Ճշգելի՝ ուրինակն, առ ի ընդոստանուլ միշտ սովաւ։

22. — Էջ 248, տող վարէն 8. «երի[ց]նաւորութիւնն և մի բնութիւնն»։ Ուղղելի՝ Գ անձնաւորութիւնն և մի բնութիւնն։

23. — Էջ 270, թիւ 277. վերնագիր. «Մխիթարանացս»։ Ուղղելի՝ Մաղթանաց։

24. — Էջ 311, տող վարէն 15. «մինչև ի ժամանակս Դիոկղիտիանոսի Աղեքսանդրու հայրապետին»։ Դիտ. — Աղեքսանդրիոյ հայրապետ՝ Դիոկղետիանոս անուանով ծանօթ չէ. կայ Դիոնէսիոս՝ Գ. դարու կիսուն։

25. — Էջ 319, տող վերէն 5. «ծնաւգի»։ Ուղղելի՝ գծողի։

26. — Էջ 325, թիւ 337. «Երուսաղէմ 1706»։ Ուղղելի՝ 1796։ Նոյնպէս՝ էջ 345։

27. — Էջ 327, թիւ 341, Ե. «Բազում ողորմածս»։ Ուղղելի՝ բազումողորմ ԱԾ.։

28. — Էջ 336, տող վարէն 5. «ի յիւր միանգամ գալուստն»։ Ուղղելի՝ միւսանգամ։

Նկատի առնելով հայերէն ձեռագիրներու յիշատակարաններուն մեծ կարևորութիւնը պատմութեան և մատենագրութեան համար, ինչպէս նաև անոնցմէ ոմանց գրական արժէքը, հարկ է շեշտել թէ յարգարժան Հեղինակը շատ օգտակար հատոր մը կ'ընծայէ հայագիտութեամբ պարապողներուն՝ իր այս աշխատութեամբ, որով երախտապարտ կը թողու ներկայ և գալիք սերունդները։

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@